ԴԵՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 30-ԱՄՅԱԿԸ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 30-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 1-ը Երևանում կայանալու է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության ու փիլիսոփայության բաժանմունքի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի սեսիան՝ նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 30-ամյակին։

Սեսիայի աշխատանքներին մասնակցելու համար Երևան են ժամանելու ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության և փիլիսոփայության բաժանմունքի ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ։ Սեսիային մասնակցելու են նաև եղբայրական ռեսպուբլիկաների՝ Վրաստանի և Ադրբեջանի Գիտությունների ակադեմիաների ներկայացուցիչները։

Գիտական սեսիայի նիստերում լսվելու է 14 զեկուցում, այդ թվում պատմական գիտությունների դոկտոր Մ. Ներսիսյանի զեկուցումը՝ «Անգլո-ամերիկյան իմպերիալիզմի պլանների տապալումը Հայաստանում 1918—1920 թ. թ. և Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում», պատմական գիտությունների դոկտոր Ծ. Աղայանի զեկուցումը՝ «Սովետական Հայաստանը երեսուն տարում» թեմայով։ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Գ. Խաչապուրիձեն զեկուցում կկարդա «Սովետական իշխանության հաղթանակը Վրաստանում 1921 թ. փետրվարին», ակադեմիկոս Ե. Կոսմինսկու զեկուցումը վերաբերում է «Սովետական բյուզանդագիտության խնդիրներին», ակադեմիկոս Հ. Օրբելին կզեկուցի «Հայաստանի 10-րդ դարի պալատական շենքերի մասին», «Նոր դիտողություններ Գառնիի տաճարի հունական արձանագրության մասին» թեմայով հանդես կգա ակադեմիկոս Հ. Մանանդյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանը կզեկուցի «Լեզուների գենեալոգիական կլասիֆիկացիայի հիմունքները և Մարի հայացքների քննադատությունը լեզուների ստադիալականության մասին», ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Հազարևն իր զեկուցումը կնվիրի «Վերածնության պրոբլեմին»։

Սեսիայում զեկուցումներով հանդես կգան նաև ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամներ Կ. Տրևերը, Ամիրանաշվիլին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիոտրովսկին, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Զալոյանը, Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Ս. Երեմյանը և պատմական գիտությունների թեկնածու Մ. Պոպովը։